ՎԱՐԺԱՐԱՆ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

ԴԵԿՏԵՄԲԵՐ 1882 Ա. ՏԱՐԻ № 5

ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱԺԻՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ

ՀԻՆ ԶՐՈՅՑ

Կար հին ժամանակ մի թագաւոր կար
Զօրեղ, իմաստուն և շատ էլ արգոյ:
Դա որ ծերացաւ, մօտեցաւ մահուան,
Չգիտէր թէ ով կ'յաջորդէ իրան:
Թէպէտ նա ունէր տասներկու որդի,
Բայց չէր իմանում, թէ որին ընտրի:
Մեծը ուժով էր, բայց անգութ ու չար,
Նորանից փոքրը թոյլ ու յուսաքար,
Երրորդը անհոգ և խելքից պակաս,
Չորրորդը անմիտ, թէև անվնաս:
Այսպէս ոչ մէկը իր սրտովը չէր,
Ոչ մէկն իր հոգին, իր խելքը չունէր:
Միայն մի քիչ յոյս փոքրիկն էր տալիս,
Նա էլ հօրը մօտ շատ չէր գնում գալիս,
Այդ պատճառով էլ հայրը չը գիտէր,
Թէ արդեօք նա ինչ շնորհքի տէր էր:

* * *

Վերջապէս մի օր՝ տես ի՞նչ հնարեց.—
Իւր հաւատարիմ ծառային կանչեց,
Թէ գնա մի լաւ ցախաւել քաղիր
Երեք—չորս տեղից պինդ ուռով կապիր։
Երբ որ ասածը ծառան կատարեց,
Բերաւ ցախաւելն առջևը դրեց,
Նա կանչեց իր մօտ բոլոր որդոցը,
Եւ առաջարկեց հնարած գործը։
«Սիրելիք, ասաց, ես ձեզ կանչել եմ,
Որ վերջին կամքս ամէնքիդ յայտնեմ։
Ինչպէս տեսնումէք, ես ծերացել եմ,
Եւ բաւական է, որքան ապրել եմ։
Շուտով իմ նախնեաց ճանապարը կ'երթամ,
Նրանց պէս ես էլ սև հող կը դառնամ,
Բայց քանի ողջ եմ, շունչս բերնումս
Կուզեմ ձեզ յայտնել՝ ի՞նչ կայ մտքումս։
Ահա ձեր առջև մի նոր ցախաւել,
Որ ես հէնց այսօր կապել եմ տուել.
Ով որ ձեզանից կը կոտրէ սորան
Իմ թագն ու գահը ես նորան կը տամ։
Դէ՛հ, առաջ եկէք, ուժերդ փորձեցէք,
Տեսնեմ ձեզանից որդդ կը կոտրէք։

*
* *

—Հա՛յր, ես կը կոտրեմ, ասաց մեծ որդին
Եւ վստահութեամբ մօտեցաւ աւլին.
Վերցրեց աւելը և ծունկը կալաւ,
Քաշեց, քաշքշեց, ոչինչ չի եղաւ.
Շատ քրտինք թափեց, շատ չարչարուեցաւ,
Դեղնեց, սիրթնեց և յետ քաշուեցաւ։
Յետոյ երկրորդը եկաւ վեր առաւ,
Նա էլ իր եղբօր դառն օրին հասաւ.
Երրորդն էլ եկաւ իր ուժը փորձեց,
Բաւական տանջանք չորրորդն էլ կրեց.
Միւսներն էլ իրանց բախտը փորձեցին

Բայց ցախաւելը չի էլ ծռեցին։
Ամէնից վերջը փոքրը մօտեցաւ.
Եւ իր հօր առջև տես ինչ խօսեցաւ։

*
* *

—Հայր, ես չեմ ուզում իմ ուժը փորձել,
Իմ եղբարց նման ի զուր չարչարուել.
Ես երեխայ չեմ, որ ձեռքս մեկնեմ
Դէպի լուսինը, որ նորան բռնեմ.
Զուրը կը խեղդէ, կրակը կ'այրէ,
Ով այս չը գիտէ, թող ինքը փորձէ։
Ես ուժ տեսնում եմ ամենայն բանում,
Թէ երկրիս վերայ և թէ երկնքում։
Առ մի բարակ ծեղ, մի մազ կամ մի թել,
Մեծ ուժ կը գտնես ամէնի մէջ էլ։
Շատ անգամ փոքրը յաղթում է մեծին
Ինչպէս մոծակը գազան առիւծին.
Թէ փոքրիկ միջատ, թէ ուղտ ահագին
Ամէնքն էլ ուժից մէկ բաժին ունին։
Կայ և խելքի ուժ, ինչպէս և սրտի,
Աչքի, ականջի, ձեռքի և ոտքի.
Ուսերն ու մէջքն էլ պակաս ուժով չեն
Բայց դոքա թոյլ են թէ միացած չեն։
Ուժով չի լինիլ ոչ մի առարկայ,
Եթէ մասներում միութիւն չը կայ.
Մասերն իրար հետ երբ սերտ կապ ունին
Այդպէսով միայն ուժով կը լինին։
Այսպէս շատ անհատ երբ որ միանան,
Մեծ եւ չափազանց մեծ ուժ կը ստանան,
Մեզ լաւ օրինակ մրջիմն ու մեղուն
Թէ նրանք խմբով ինչեր են անում,
Նրանց պէս եթէ մարդիկ միանան,
Լեռներ կը շրջեն եթէ կամենան։
Եւ ինչքան լճեր, ինչքան ջրանցքներ
Միացած ուժով կարող են շինել,

Եւ մեր թշնամուն ինչպէս կը յաղթենք,
Եթէ ամէնքս մէկ տեղ չը կռուենք։
Եթէ ես քո տեղ թագաւոր լինեմ,
Տես իմ թշնամուն ինչպէս կը յաղթեմ.—
Նորա միութեան կապը կը քանդեմ,
Ուժերն իրարից կը հեռացնեմ
Յետոյ նախ մէկին և ապա միւսին
Զոկ ջոկ ջարդելով կընկճեմ ամէնքին,
Իսկ իմ տէրութեան ցրուած ուժերը
Ինչպէս ցախաւլիդ ճկուն ճղները
Ամուր կապերով կապած կը պահեմ
Այս է քո միտքն էլ, ես ինչքան գիտեմ։
Բայց որ ասածս լաւ հասկացնեմ,
Տեսէք աւելը ինչպէս կը կոտրեմ։»
Եւ այս ասելով՝ նա վեր է առնում
Աւլի կապերը քանդում, արձակում
Ճկուն ճղները մէկ մէկ վերցնում
Ամէնի առջև կոտրատում ջարդում։

*
* *

—Ալրիս, իմ որդի, ասում է հայրը
Քեզ արժանի է իմ թագն ու գահը։
Գրկում է որդուն ճակատից պաչում
Եւ թագն իր ձեռքով գլխին է դնում։
«Տեսէք, ասում է միւս եղբայրներին
Դուք չը նախանձիք ձեր եղբօր փառքին
Եթէ սորա հետ սերտ սիրով մնաք,
Աւելի մեծ ուժ և փառք կը ստանաք,
Իսկ եթէ զատուիք և ջոկ ջոկ լինիք
Քանդուած աւլի պէս շուտ կը կոտրտուիք։
—Մենք հնազանդ ենք—ասում են նրանք
Տալով եղբօրը պատիւ և յարգանք
Իմաստուն որդին հասաւ մուրազին
Դուք նոյնպէս հասնէք ձեր մուրազներին

Գ. ԱՊԱՑԵԱՆՑ.

ՄԱՐՄՆԱՄԱՐԶԱԿԱՆ ԽԱՂ

(ՄԱՆԿԱԿԱՆ)

Ահա՛ եկաւ խոտ·հարողը,
Ուսին դրած գերանդին,
Բոլոր խոտը նա հարել է
Բան չի թողել մեր հանդին։
—Ա՛յ խոտահար, ասա տեսնենք,
Դու ի՞նչպէս ես խոտ հարում,
—Այսպէս ահա, լաւ նայեցէք,
Ես այսպէս եմ խոտ հարում.
Հէ՜ է՜պ, հօօպ,
Հէ՜ է՜պ, հօօպ...
—Ա՜խ, ի՞նչ լաւ է, եկէք սովրենք·
Մենք էլ այդպէս խոտ հարենք.
Հէ՜ է՜պ, հօօպ...
Հէ՜ է՜պ, հօօպ...

*
* *

Ահա եկաւ մեր հնձողը,
Ձեռքին փայտէ մատնոցներ,
Պատրաստել է սուր մանգաղը,
Պէտք է հնձէ մեր արտեր։
—Հնձող եղբայր, ասա տեսնենք,
Դու ինչպէս ես հունձ անում։
—Այսպէ՛ս ահա, լաւ նայեցէք,
Ես այսպէս եմ հունձ անում.
Հէ՛պ, հօպ, հէ՜պ,
Հէ՜պ, հօպ, հէ՜պ...*)

---

*) Գերանդիով հնձելն երկու տակտ ունի, իսկ մանգաղով հնձելը՝ երեք։

Ախ, ի՞նչ լաւ է, եկէք սովրենք,
Մենք էլ այդպէս հունձ անենք
Հէ՞պ, հօպ, հէ՞պ
Հէ՞պ, հօպ, հէ՞պ...

Ղ. ԱՂԱՑԵԱՆՑ.

ԲԵՐՆԱՐ ՔԵՌՈՒ ԽԵՑԵՄՈՐԹԸ.

ԷՐԿՄԱՆ ՇԱՏՐԻԱՆԻ

Բերնար քեռու պահարանի վերայ մի մեծ վարդագոյն խեցեմորթ կար, որ հազուագիւտ էր Գունդսորիւկի անտառներում, և գտնվում էր ծովից 150 լիս հեռաւորութեամբ։ Ծերունի նաւավար Դանիէլ Բիխտերն այդ բերեց ովկիանոսի միւս ափից որպէս յիշատակ իւր ճանապարհորդութեանց։ Դուք կարող էք երևակայել, թէ ինչպիսի հիացմամբ մենք՝ գիւղի երեխայքս նայում էինք այս հրաշալի խեցուն։ Ամէն անգամ, երբ քեռիս դուրս էր գնում տանից, մենք վազում էինք սենեակը, գլխարկներս չը վերցրած և ձեռքներս գրպաններումս դրած շարվում էինք և զննում ամերիկական խխունջը, որպէս անուանեց Գրիբէլ պառաւ աղախինը։

Լիւդվիգն ասում էր, որ այդ խխունջը լինում է ցանկերի տակ, Կասպերը պնդումէր, թէ լողում է գետի մէջ, բայց ոչ մէկը ճիշտ չը գիտէր։

Մի անգամ քեռի Բերնարը լսեց մեր վէճը և ծիծաղեց։ Նա գլխարկը սեղանի վերայ դնելով, վերցրեց խեցեմորթը և նստելով բազկաթոռի վերայ ասաց.

—Որդիք, լսեցէք սորա մէջ ինչ տեսակ ձայն է լսվում։

Իսկոյն իւրաքանչիւրը մեզանից ականջը դրեց խեցեմորթի վերայ և մենք լսեցինք մի օտարոտի ձայն, որ

կարծես թէ հառաչանաց, շշնչի և կամ հողմի ձայն էր, ինչպէս երբեմն լսվում է անտառում։ Մենք զարմացած նայում էինք միմեանց։

—Հը, ի՞նչ էք մտածում, հարցրեց քեռիս։

Ոչ ոք չը կարողացաւ պատասխանել։ Այն ժամանակ նա ասաց ծանր և մեղմ ձայնով.

—Որդիք, այդ ձայնն արիւնից է առաջ գալիս, որ պտտվում է ձեր գլխում, ձեռքերում, սրտում և առհասարակ ձեր բոլոր անդամներում։ Մի տեղում նա հոսում է հանդարտ վտակի պէս, մի այլ տեղում խփում է հեղեղի կամ ուժեղ և լայն գետի նման։ Արիւնը ձեր բոլոր ներքին գործարաններին կեանք է տալիս—որով դուք ապրում և աճում էք։ Այժմ, որպէս զի դուք լաւ հասկանաք, թէ ինչո՞ւ է խեցեմորթի մէջ ձայն լսվում, պէտք է մի բան բացատրել։ Ձեզ յայտնի է դատարկ կոչուած ժայռի արձագանքը, որ յետ է դարձնում ձեր խօսքերը նոյնքան պարզ, որպէս արտասանել էք, ձեր երգերը և հովուական սրնգի գեղգեղանքը, երբ դուք երեկոները կանչում էք ձեր հօտերը։ Այս խեցեմորթի ձայնն էլ նման է արձագանքին, միայն այն զանազանութիւնը կայ, որ երբ ականջներդ դնում էք նորա վերայ, այն ժամանակ նորա մէջ լսվում է այն ձայնը, որ ձեր մէջ է լինում և այդ ձայները նման են երկնային և երկրային ձայներին, որովհետև մեզանից իւրաքանչիւրը կազմում է փոքրիկ աշխարհ։

Ապագայում, երբ դուք կը լինիք հասակաւոր մարդիկ, աւելի լաւ կը հասկանաք իմ խօսքերը և կ'իմանաք, որ իմ ասածները ճիշտ են։ Իսկ այժմ, սիրելիք, արթուն պահեցէք ձեր հոգին, մի արատաւորէք ձեր մտքերը, որովհետև սորանում և՛ս կայ կեանք։ Արարիչը ձեզ տուել է հոգի, որ ձեզ լուսաւորէք այնպէս, ինչպէս արեգակը, որ Նորա ստեղծածն է նմանապէս—երկիրս լուսաւորելու։ Իմացէք, որդիք, որ երկրիս վերայ կան տեղեր, ուր արեգակը երբէք չէ լուսաւորում։ Այդ տեղերը

շատ դժբաղտ են։ Մարդիկ այնտեղ չեն կարող ապրել, այնտեղ չը կան ոչ ծաղիկներ, ոչ ծառեր, ոչ պտուղներ, ոչ թռչուններ, ոչինչ, բացի ձիւնից և սառուցից, այնտեղ ամէն բան մեռած է. այդպէս և դուք կը լինիք, եթէ խաւարեցնէք ձեր Հոգին, ձեր ներքին փոքրիկ աշխարհը կը նսեմանայ և դուք դժբաղտ կը լինիք։ Ուրեմն փախէք այն բաներից, որոնք կարող են շփոթել ձեր Հոգին. ծուլութիւնը, որկրամոլութիւնը, անհնազանդութիւնը և մանաւանդ խաբեբայութիւնն արատներ են, որոնք մառախուղի պէս կը ծածկեն ձեր Հոգին և կը քողարկեն այն լոյսը, որ Արարիչը ձեզ պարգևել է։ Եթէ դուք պահպանէք ձեր Հոգին, այն ժամանակ նա կը փայլի որպէս արեգակ և դուք երջանիկ կը լինիք։

Ահա այսպէս խօսեց քեռի Բերնարը և մեզանից իւրաքանչիւրը լսելով նորան, ուխտեց ինքն իրան հետևել նորա բարի խորհուրդներին և չը թոյլ տալ, որ չար մառախուղը խաւարեցնէ մեր Հոգին։

Նորանից յետոյ շատ անգամ ես ականջս դրել եմ խեցեմորթի վերայ։ Աշնան երկար օրերին, իւրաքանչիւր երեկոյ դաշտից վերադառնալով ես վերցնում էի խեցեմորթը գոգս և թշերս կպցնելով նորա վարդագոյն արծնապակուն, ուշադրութեամբ լսում էի։

Բայց ինձ ամէնից շատ զարմացնում էր այն, որ խեցեմորթի շշունչը լսելիս ինձ թւում էր որ ես իմ մտքի շարժմունքները որոշում եմ, մի քանիսը համեստ և քնքոյշ էին, միւսներն ուրախալի, մի քանիսը նման էին սոխակի երգերին գարնան մօտենալու ժամանակներում և այս ինձ հիացնում էր։ Ես այսպէս բերանաբաց և չռած աչքերով ամբողջ ժամեր կը նստէի, եթէ մեր պառաւ Գրիդելը ինձ վերայ չը գոռար.

— Գրիցել, ինչ է պատահել քեզ։ Հեռացիր, խընդրեմ, այդ խխունջից և սեղանը պատրաստիր, ահա բժիշկն էլ գալիս է։

Այն ժամանակ ես ակամայ խեցեմորթը դնում էի

պահարանի վերայ և ինձ ու քեռուս համար սեղան էի պատրաստում, վեր էի առնում ջրի մեծ շիշը և դնում աղբիւրը ջուր բերելու։

Մի անգամ խեցեմորթում ես լսեցի փոքր ինչ անախորժ ձայներ և սարսափեցայ։ Այս երևի նորանից էր, որ ես էլ ինձանից դժգոհ էի, մռայլ ամպը ծածկել էր իմ հոգին. մեղը իմն էր, իմը։

Բայց պէտք է ձեզ պատմել սկզբից, բոլոր ինչ որ պատահել էր։ Ահա։

Մի անգամ ճաշից յետոյ ես և Լիւդվիգը ոչխարներ էինք արածում Ալտենբերգի հովտում. մենք խաղում, սուլում էինք և ոչ մի բանի վերայ չէինք մտածում։ Այծերը ժայռերի գագաթների վերայ էին վազվզում պարանոցներն երևացնելով կապոյտ երկնքում։ Մեր պառաւ անատամ Բոհել անունով շունը նիրհում էր թաթերի մէջ պահելով իւր դունչը։ Մենք եղևնու ստուերումն էինք հանգստանում, երբ յանկարծ Լիւդվիգը ցոյց տուեց ինձ ծառի խոռոչն ասելով.

—Նայէ՛ր, ժայռի մօտ, մեծ ծառի վերայ մի սարեակի բոյն կայ։

Ես նայեցի և տեսայ մի սարեակ, որ երևի նշմարեց, որ մենք նորան էինք նայում, որովհետև անհանգիստ ոստնում էր մէկ ճիւղից միւսը։

Քեռի Բերնարը շատ անգամ էր արգելել ինձ բոյներ քանդել, բայց և այնպէս այդ փտած մեծ ճիւղի խոռոչում գտնուած բոյնն էլ կործանուելու վերայ էր։

Խորասուզուած մտածմունքի մէջ՝ նայում էի այն կողմը։

—Այնտեղ կան ձագուկներ, ասաց Լիւդվիգը.— այս առաւօտ, երբ ժայռի վերայ թրթնջուկ էի քաղում, լսեցի նոցա ծլվլոցի ձայնը. նոքա վաղը կը թռչեն, որովհետև արդէն թևեր ունեն։

Ես բոլորովին լռել էի, բայց փորձելու ցանկութիւնն յաղթեց ինձ։

Իսկոյն վերկացայ և մեծ դժուարութեամբ բարձրացայ դէպի ծառը և փորձեցի բռնել, բայց շատ հեռու էին։ Դժբախտաբար մօտը կար մի փոքրիկ ծառ։ Ես բարձրացայ նորա վերայ և այսպէս կարողացայ մեծ ծառի ճիւղից բռնել և անցկացայ նորա վերայ։ Սարեակները ողբալի ձայնով ճչում էին և ծածկվում տերևների մէջ։ Ես նոցա վերայ ուշադրութիւն չը դարձրի։ Զորացած ճիւղի վերայ նստեցի որպէս ձիու վերայ, որպէս զի հասնեմ բնին։ Նորա մէջ կային երեք ձագուկներ և մի ձու. խելքս գնաց։ Թռչունները վզերը բարձրացրին և բացարին իրանց դեղին կտուցներն այնպէս մօտ, որ ինձ շատ հեշտ էր թռչում նոցա ձեռք բերել։ Ես մօտեցայ և դեռ հազիւ էի մեկնել ձեռքս, երբ յանկարծ ճիւղը կոտրուեց և ես հազիւ միայն կարողացայ արտասանել «Ահ, Տէր իմ» խօսքերը։ Օդի մէջ շուռ եկայ և ընկայ ստորին ճիւղի վերայ, կպչելով նորան բոլոր ուժովս։ Ամբողջ ծառը ցնցուեց և կոտրուած ճիւղը վայր ընկաւ ուղղակի ներքևը հովտում վազող վտակի մէջ և տակովն եղաւ։ Ես կամաց կամաց հասայ ծառի բնին, Աստծուն գոհութիւն մատուցանելով ազատութեանս համար և դեղնած ու սփրթնած իջայ ծառից։ Գլխիս վերայ պտոյտ էին գալիս ծեր սարեակներ, ցաւալի ճիչ բարձրացնելով։ Լիւդվիգը փախաւ, բայց երբ մօտենում էր Ալտեմբերգին, պատահմամբ յետ նայեց և տեսնելով ինձ ողջ և առողջ, վազեց դէպի ինձ հեւալով և աղաղակելով.

—Դու կենդանի՞ ես, ուրեմն անդունդը չը նկա՞ր։

—Այո, պատասխանեցի հազիւ շարժելով լեզուս, կենդանի եմ, Աստուած փրկեց ինձ։ Բայց շուտով հեռանանք այստեղից, սաստիկ վախենում եմ։

Երեկոյեան 7 ժամն էր, եղևնիների ետև արեգակը մայր էր մտնում և այս անգամ ես անկարող եղայ ոչխարներին նայել։ Շունը ժողովեց հօտը, որ հանդարտ գնում էր Գիրշլանդի թոզոտ ճանապարհով։ Այս երե-

կոյ ես և Լիւդվիգը չէինք սուլում ու մեր սրինգը հնչեցնում և դասարկ ժայռի արձագանքը չէր կրկնում մեր ձայնը։ Մենք բոլորովին վախեցած էինք և ծնկներս դողում էին։ Երբ մենք հասանք գիւղը և ոչխարներն իրանց փարախը մտան, ես Լիւդվիգին ասացի.

—Ոչ ոքի հօ չե՞ս ասի այս բանը։

—Ապահով եղիր, ասաց նա։

Ես գնացի քեռուս մօտ։ Նա գնացել էր սարը այցելելու Ծերունի հիւանդ փայտահատին։ Գրիդելը սեղան էր պատրաստում։ Քեռուս ուշանալու պատճառով մենք միայնակ ընթրեցինք։

Գրիդելը սեղանն հաւաքելով խոհանոցում մաքրեց ամանները, իսկ ես մտայ մեր գրադարանը և ահ ու դողով վերցրի խեցեմորթը։ Տէր իմ Աստուած, ինչպիսի ձայներ էին լսվում։ Ես լսում էի վտակի մռնչիւնը, սարեակների ցաւալի աղաղակներն ու ճիւղերի փշշոցը։ Եւ այս բոլորից յետոյ ինձ երևում էին փոքրիկ թռչունները, ջարդուած և ճխլուած։ Սարսափս բռնեց։ Ես վազելով փոքրիկ սենեակս, պարկեցի, բայց քունս չէր տանում. դողում էի։ Ծամը ինն և կիսին իմացայ, որ քեռիս վերադարձաւ։ Նա դրան մօտ կանգնելով իջաւ ձիուց, տարաւ նորան ախոռն ու ինքը մտաւ սենեակը։ Իմացայ որ նա պահարանը բացեց և բան կերաւ։

—Որ իմանար, թէ ես ինչ եմ արել. ասում էի ինքս ինձ։

Վերջապէս նա պարկեց։ Ես շուռ ու մուռ է գալիս անկողնումս, բայց շփոթութիւնից չը կարողացայ քնել. իմ հոգին թռում էր ինձ սև, ինչպէս թանաք, լացս գալիս էր։ Կէս գիշերին յուսահատութիւնս այն աստիճանի հասաւ, որ ես աւելի լաւ համարեցի խոստովանուել, ուստի շապկանց մտայ իմ քեռի Բերնարի ննջարանը. նա քնած էր, սեղանի վերայ մոմ էր վառած։ Նորա մահճակալի մօտ ընկայ, չոգեցի։ Քեռիս զարթնեց և գլուխը վեր քաշելով զարմացմամբ նայեց ինձ ասելով.

—Դու ես, Ֆրիցել, ինչ է պատահել քեզ, որդեակս։

—Սիրելի քեռի, բացականչեցի ես հեծկլտալով,—ներեցէք ինձ, ես մեղք գործեցի Աստուծոյ և ձեր առաջ։

—Ի՞նչ ես արել, հարցրեց նա։

—Ալտենբերգում ես բարձրացայ ծառի վերայ սարեակների բունը քանդելու և ճիւղը կոտրուեց։

—Կոտրուե՞ց, Տէր իմ Աստուած։

—Այո, բայց Աստուած փրկեց ինձ, ես բռնեցի մի ճիւղից. բայց ես զգում եմ, որ ծեր սարեակները պահանջում են ինձանից իրանց ձագերը, ինձ թւում է որ նոքա պտոյտ են գալիս գլխիս և ինձ քնել չեն թողնում։

Քեռիս լուռ էր. ես դառնապէս լալիս էի։

—Քեռի ջան, բացականչեցի ես,—այսօր երեկոյեան ես երկար ժամանակ լսում էի խեցեմորթին, ես լսումէի այնպիսի յուսահատական ձայներ, որ ուղղել չարութիւնս արդէն անկարելի է։

Քեռիս բռնեց ձեռքս և մի բոպէից յետոյ ասաց իւր սովորական ձայնով.

—Ես քեզ ներում եմ։ Հանգստացիր...բայց այս քեզ համար կը լինի մի դաս։ Մտածիր, ի՞նչ կը լինէր իմ դրութիւնը, եթէ քեզ մեռած բերէին ինձ մօտ։ Ծեր սարեակներն ևս զգում են միևնոյնը, ինչ որ ես կը զգայի, նոքա իրանց ձագերն են պահանջում։ Դու սորա մասին չես մտածել Բայց զղջացիր և ես ներում եմ քեզ։

Նա վեր կացաւ և շաքարախառն ջուր խմեցնելով ինձ ասաց.

—Դնա՛, քնի՛ր...այժմ քեզ ոչինչ չի խանգարի։ Աստուած կը ներէ քեզ և դու կը քնես։ Բայց վաղուանից այլ ևս ոչխարներ չես արածի, որովհետև քո հաստակի երեխանցը ժամանակ է արդէն ուսանել։

—Ես հանգստացայ և խաղաղ քնեցի։

Միւս օրը քեռիս տարաւ ինձ մեր ծերունի ուսուցիչ՝ Տօբի Վերիուսի մօտ։ Ճիշտն ասած, առաջին օրերն ինձ համար շատ ծանր էր առաւօտից մինչև երեկոյ սենեակում մնալ անշարժ, ես ցաւում էի ազատութեանս համար, բայց առանց աշխատելու այս աշխարհում ոչինչ չի կարելի անել։

Շուտով ես սովորեցի աշխատանքին և այդ գործն ինձ սկսեց զուարճացնել։ Մարդս միայն աշխատելով է կարողանում ձեռք բերել մարդկային կատարելութիւնները և ընդունակ դառնում օգտակար լինել իւր շրջապատողներին։

Ներկայումս Բերնար քեռիս ծերացած է. նա ամեն իւր ժամանակն անց է կացնում վառարանի մօտ, ամառը ստուերի տակ։

Այժմ ես նորա տեղն եմ և արդէն բժիշկ եմ։ Ես առաւօտը վաղ գնում եմ գործի և վերադառնում միայն երեկոյեան յոգնած։ Իմ կեանքը շատ ծանր է, մանաւանդ ամեն, բայց և այնպէս ես երջանիկ եմ։

Առաջուայ պէս խեցեմորթը դրած է մեր պահարանի վերայ։ Երբեմն սարերից վերադառնալիս ես վերցնում եմ այն և առաջուան պէս լսում եմ իմ ներքին աշխարհի արձագանքը։ Իմ հոգու շարժմունքները միշտ ուրախալի չեն լինում, երբեմն տխրալի են, մանաւանդ երբ իմ հիւանդներից մինը մահուան մօտ է լինում և ես չեմ կարողանում օգնել նորան. բայց այդ արձագանքը չէ արդէն այնպէս զարհուրելի, ինչպէս սարեակների բունը քանդելիս։

Միայն նա է երջանիկ, ով որ ունի անվրդով խիղճ. հարուստը թէ աղքատը միայն այն ժամանակ է վայելում կատարեալ երջանկութիւն, երբ խղճմտանքը հանգիստ է։

ԹԱՐԳ. Թ. ԱՏՈՎՄԵԱՆ.

ՑՈՒՄՐԺԱՆՔ, ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ, ԽՆԴԻՐՆԵՐ:

Չորրորդ համարի մէջ գտնուած զուարճալիքների բացատրութիւնը:

21) *Գիրք կարդա՛ որ մարդ լինիս.* 22) *Կուժը արևի գօրութիւնը չի իմանալ:* 23) *Մի ծաղկից օձը թոյն է շինում, ճանճը մեղր:*

24)

մ	ա	հ	ա	կ
ա	ւ	ա	ղ	
հ	ա	ւ		
ա	ղ			
կ				

25) *Գանձակ.* 26) *Սաղը:*

27)
• • o o o o
o o o o o o
o o o o o o
o o o o o o
o • o o o •
• o o o o •

28) *Ամբոխ:*

29) *Ժողովրդական առած. (Առաջարկեց ա. լսարանի ուսանող Գ. Ճեմարանի Տ. Յովհաննիսեան:)*







30) Առաջարկեց Ա. Ս.



31) Առաջարկեց Ա. Ս.



Հ ԱԻ Ա Ց Խ Է

32) Մի վաճառական խանութում ունի մի կտոր կերպաս 20 արշին երկայնութեան: Իւրաքանչիւր օրը նրանից գնում են մի արշին որ նա պարտաւոր է կտրել կտորից: Քանի՞ օրում նա կվերջացնէ կտորի կտրելը:

33) Գետնի տակին կարմիր բուղէն դոռում է. իմացէք ի՞նչ է:

34) Դարունքին մեզ զարդարում է, ամառը ուրախացնում, աշունքը կերակրում. իսկ ձմեռը տաքացնում. իմացէք ի՞նչ է:

35) Առաջին երկու վանկը պտուղ է, երկրորդը՝ առարկայ խօսքի նոյնանիշն է. իսկ ամբողջը Հայոց Հին մայրաքաղաք է: Գտէք այդ խօսքը:

36) Իմ առաջինը գետերի մօտ թէ անապատում
Անհամար թուով փռուած է լինում.
Առանց երկրորդի երբէք չեն շինում
Ոչ կառք, ո՛չ սայլ և ո՛չ էլ ջրաղաց:
Ամբողջը գտէք՝ միշտ թափառում է սար ու ձոր ընկած
Եւ աշխատասէր մարդոյ սրտի մէջ գցում է սարսափ:

ԽՄԲԱԳԻՐ—ՀՐԱՏԱՐԱԿՈՂ. Ն. ԽՈՍՐՈՎԵԱՆ

Дозволено цензурою. Тифлисъ, 13 Декабря 1882 г.

Типографія М. Варганянца и К. противъ Тройц. церк.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

„ՄՇԱԿ“

ԱՄԵՆՕՐԵԱՅ ԼՐԱԳԻՐ

(ՏԱՍՆ ԵՒ ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ)

Առաջիկայ 1883 թուին

կը հրատարակուի նոյն դիրքով և նոյն պրոգրամայով։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ։ Տարեկան 10 ռուբլի, վեց ամսուայ 6 ռուբլի, իւրաքանչիւր ամսուայ 1 ռուբլի։

ՀԱՏՈՎ. Համարները 5 կոպէկ։

ՀԱՍՑԷՆ. Тифлисъ, редакція «Мшакъ»

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Առաջիկայ 1883 թ. յունվարից Թիֆլիսում կը սկսուի հրատարակուիլ

ԱՂԲԻՒՐ

Մի ամսեայ հրատարակութիւն երեխաների, ծնողների և դաստիարակների համար.

(ՏԱՐԻՆԸ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՍՆԻ 12 ՀԱՄԱՐ 1—3 ԹԵՐԹ)

Տարեկան գինը 3 ռուբլի, կէս տարուանը 2 ռ., առանձին համարները 15—40 կոպ.

Ծանօթ. ա) վէպեր, կենսագրութիւններ և այլն կարող են լինել և պատկերներով։

բ) Համարներից ոչ աւելի քան վեցի բովանդակութիւնը կարող է միայն և վէպերից կազմուած լինել։

գ) Տարեկան բաժանորդները կը ստանան երկու պրէմիա յուլիսին մի պատկեր, իսկ դեկտեմբերին օրացոյց առաջիկայ տարուայ համար։

Հասցէն՝ Тифлисъ Редакція «Ахшоръ» իսկ արտասահմանից՝ Tiflis (Caucase) Redaction du journal «Agpur»

Խմբագիր-Հրատարակիչ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆՑ

ՊՍԱԿ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԼՐԱԳԻՐ

ԵՐԵՒԱՆՈՒՄ

Առաջիկայ 1883 թուականին

կը հրատարակուի նոյն դիրքով շաբաթական մի անգամ նոյն պրոգրամմայով՝

Տարեկան բաժանորդագինն է Երևանում 3ռ., իսկ Երևանից դուրս—ամէն տեղ—4 ռուբ. կանխիկ վճարելի։

Ստորագրուել կարելի է Պսակի խմբագրատանը։ Օտար քաղաքացիները դիմումեն՝—Эривань. Въ редакцію ПСАКЪ.

Ծանօթ. Եթէ հանգամանքները նպաստեն Պսակը կը հրատարակուի շաբաթական երկու անգամ միևնոյն բաժանորդագնով։

Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան Վարչութիւնը որոշել է առաջիկայ 1883 թուականի Սեպտեմբեր ամսից ունենալ հայ օրիորդներից մի որդեգրուհի Ս. Պետերբուրգում մանկավարժութիւն կամ բժշկականութիւն ուսանելու համար։ Որդեգրուհի լինել ցանկացող անձն աւարտած պէտք է լինի իւր ուսման դասընթացը գիմնազիօնում՝ նախապէս Հայոց միջնակարգ ուսումնարանում աւարտելուց յետոյ։ Այսպիսիք իւրեանց առաջարկութեամբ թող բարեհաճեն դիմելու վարչութեանը, ներկայացնելով թէ՛ Գիմնազիօնի և թէ՛ Հայոց միջնակարգ Ուսումնարանի Վարչութիւններից ստացած վկայագիրներ։